

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՁԵՎԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մ. ՀԱՅԿՑԱՆՑ

20-րդ դարին բնորոշ երևույթներից է տնտեսական կյանքի ինտերնացիոնալացումը, որը գնալով խորանում է ի հաշիվ համաշխարհային առևտրի և հատկապես նոր ձևավորվող տնտեսական հարաբերությունների՝ արդյունաբերական համագործակցության: Արդյունաբերական համագործակցությունը առաջին հերթին ենթադրում է տարբեր երկրների ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցությամբ համատեղ արտադրության կազմակերպումը՝ արտադրանք թողարկելու, աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու համար¹:

Որպես կանոն, արդյունաբերական համագործակցությունն ընթանում է երկու եղանակներով, առաջին՝ համագործակցող անձանց կողմից նոր իրավասուբյեկտ անձի հիմնադրումով, և երկրորդ՝ պայմանագրային հիմունքներով՝ առանց նոր իրավասուբյեկտ անձի հիմնադրման: Մեր խնդրո առարկան է կազմում համագործակցության երկրորդ եղանակը, որն այլ կերպ կարելի է անվանել «օտարերկրյա ներդրումների իրականացման պայմանագրային ձև»:

Համաշխարհային տնտեսությանն անդամագրված յուրաքանչյուր պետություն, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը, պետք է ներպետական օրենսդրությամբ սահմանի և իրավական կարգավորման ենթարկի արդյունաբերական համագործակցության՝ միջազգային բիզնեսի պրակտիկայում քննություն բռնած բոլոր ոացիոնալ ձևերը՝ ի շահ սեփական տնտեսության զարգացման և ի հավաստումն միջազգային տնտեսական համագործակցության մեջ ներդրում ունենալու պատրաստակամության:

Օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքի (այսուհետև՝ օրենք) 4-րդ հոդվածի դ) կետի համաձայն «օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն ներդրումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շարգելված այլ ձևերով, մասնավորապես Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ կնքված պայմանագրերի հիման վրա»:

Ի՞նչ պայմանագրերի մասին է խոսքը, և արդյո՞ք ունեն դրանք իրավաբանական կարգավորում մեր օրենսդրությամբ, թե՞ ոչ:

Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները կար-

¹ Shtu Международно-правовые основы иностранных инвестиций в Россию, М., 1995, էջ 251—252:

գավորվում են սույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով»: Պայմանագրային հիմունքներով օտարերկրյա ներդրումների մասին մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները մենք պետք է փնտրենք ՀՀ օրենսդրական այլ ակտերում:

1992 թ. ապրիլի 28-ին ընդունված Միջազգային արժութային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության նախագահն իրավասու է ապահովել Հայաստանի Հանրապետության անդամակցությունը, մասնավորապես, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը (այսուհետև՝ գործակալություն)՝ ստորագրելով և վավերացնելով գործակալության հիմնադրման կոնվենցիան»: Դա նշանակում է, որ գործակալության հիմնադրման կոնվենցիան (ընդունվել է Սեուլում, 1985 թ.) պարտադիր ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության տարածքում:

Եվ երբ մենք անդրադառնում ենք Սեուլի կոնվենցիային, ապա նրանում, ի թիվս ներդրումների իրականացման այլ ձևերի, հանդիպում ենք նաև կոնկրետ նշված՝ օտարերկրյա ներդրողների կողմից իրականացվող ներդրումների պայմանագրային ձևերի, որպիսիք են կառավարման և սպասարկման, արդյունքի բաժանման, ֆրանշիզայի, վարձակալման, լիցենզավորման պայմանագրերը¹:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն Գործակալությունը նման ձևերով իրականացվող ներդրումների համար երաշխիքներ է տալիս այն դեպքում, երբ հավաստիանում է ընդունող պետության օրենսդրությանն այդ ներդրումների համապատասխանության մեջ²: Ինչպես նկատեցինք, այստեղ առաջին պլան է մղվում ընդունող պետության օրենսդրությամբ նրման ձևերի իրավական կարգավորման խնդիրը:

Այս տեսանկյունով մեր հանրապետությունում իրավական կարգավորման վիճակը դեռևս հեռու է բավարար գնահատվելուց, քանի որ որոշ պայմանագրեր կամ չունեն իրենց օրենսդրական ամրապնդումը, կամ էլ սահմանված են շատ անորոշ, որը դժվարացնում կամ խոչընդոտում է նման պայմանագրերի կիրառումը պրակտիկայում:

Ստորև կփորձենք մեկնաբանել նշված պայմանագրերի իրավական բրնույթն ու պարզաբանել այդ բնագավառում ՀՀ օրենսդրության առկա վիճակը:

Միջազգային բիզնեսի պրակտիկայում վաղուց կիրառում գտած այդ պայմանագրերը նոր երևույթ են մեր տնտեսական կյանքում: Դա է պատճառը, որ այդպիսիք մեր օրենսդրությամբ նախկինում չեն նախատեսվել, իսկ գործող օրենսդրության պայմանագրերի առանձին տեսակներին վերաբերող իրավանորմերն էլ կիրառելի չեն նրանց համար:

1. ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրերից միայն համատեղ գործունեության պայմանագիրը կարող էր կիրառվել ներդրումներ իրականացնելու համար, սակայն երբ անդրադառնում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածին (որը տալիս է այդ պայ-

² Տե՛ս նույն տեղը, էջ 204:

մանագրի հասկացությունը), ապա այն բովանդակային առումով այդպիսի հնարավորություն չի ընձեռնում: Նոր ձևավորվող տնտեսական հարաբերությունների պայմաններում անհրաժեշտ է վերանայել համատեղ գործունեության պայմանագիրը՝ ընդլայնելով նրա շրջանակները, որպեսզի այն ներառի նաև այդ պայմանագրով օտարերկրյա ներդրումներ կատարելու հնարավորությունը: Այստեղ օրինակելի կարող է լինել ՌԴ քաղաքացիական օրենսգրքում ցուցաբերված մոտեցումը, համաձայն որի «համատեղ գործունեության պայմանագրով կողմերը պարտավորվում են առանց իրավաբանական անձի հիմնադրման՝ միավորել իրենց միջոցները և համատեղ գործել՝ շահույթ ստանալու կամ օրենսդրությամբ շարգելված այլ նպատակի հասնելու համար»*: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով կնքված համատեղ գործունեության պայմանագրի կողմեր կարող են լինել միայն անհատ ձեռներեցիները և (կամ) առևտրային կազմակերպությունները: Ինչպես նկատում ենք, տվյալ պարագայում արդեն համատեղ գործունեության պայմանագիրը ստանում է տնտեսական պայմանագրի կարգավիճակ:

2. Սեուլի կոնվենցիայի 12-րդ հոդվածում հիշատակված պայմանագրերից շՇ օրենսդրությամբ մանրամասն իրավական կարգավորման է ենթարկվել լիցենզիոն պայմանագիրը, որի ուժով արտոնագրված արդյունաբերական սեփականության օբյեկտներն օգտագործելու իրավունքը վերապահվում է այլ անձի:

Համաձայն Արտոնագրի մասին շՇ օրենքի 11-րդ հոդվածի՝ արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքն է արդյունաբերական սեփականության օբյեկտն օգտագործել իր հայեցողությամբ: Արտոնագրատիրը կարող է արդյունաբերական սեփականության օբյեկտներն օգտագործելու իրավունքը վերապահել այլ անձանց՝ վերջիններիս հետ կնքելով լիցենզիոն պայմանագրեր:

Լիցենզիայի պայմանագրով արտոնագրատիրը (լիցենզատու) պարտավորվում է մեկ այլ անձի (լիցենզառու) իրավունք տալու արտոնագրով պաշտպանվող օբյեկտը օգտագործելու պայմանագրով նախատեսված ծավալով, իսկ լիցենզառուն պարտավորվում է լիցենզատուին մուծել պայմանագրով սահմանված վճարումները և իրականացնել պայմանագրով նախատեսված այլ գործողություններ (արտոնագրի մասին շՇ օրենքի 15-րդ հոդված):

«Արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործում» ասելով հասկանում ենք այդ օբյեկտի կիրառմամբ պատրաստված արտադրանքը տնտեսական շրջանառության մեջ մտցնելը: Նշանակում է՝ արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման վերջնական նպատակը շահույթի (եկամտի) ստացումն է, իսկ այստեղից էլ հետևում է, որ լիցենզիոն պայմանագիրը դասվում է տնտեսական պայմանագրերի շարքը. սրանում է լիցենզիոն պայմանագրով օտարերկրյա ներդրումներ կատարելու հնարավորությունը:

Գրականության մեջ նշվում են մի շարք հանգամանքներ, որոնք պայմանավորում են լիցենզիոն պայմանագրերի կնքումն այլ անձանց հետ (այդ թվում օտարերկրյա):

Առաջին՝ շուկայական մրցակցությանը չդիմացող մասն ու միջին ֆիրմաները վաճառում են լիցենզիաներ, որը դառնում է նրանց եկամտի հիմնական աղբյուրներից մեկը:

Երկրորդ՝ նույնիսկ հզոր ֆիրմաները, Ղկարողանալով բավարարել մըր-

* Տե՛ս Правовое регулирование иностранных инвестиций в России, М., 1995, էջ 55:

3 Տե՛ս Гражданский кодекс Российской Федерации, М., 1996, էջ 439—440:

ցունակ ապրանքի անընդհատ աճող պահանջարկը, ինչպես նաև շղիմանալով հակամենաշնորհային օրենսդրության ճնշմանը, վաճառում են իրենց լիցենզիաների մի մասը, որից գալիս է նաև լրացուցիչ եկամուտ:

Ծրրորդ՝ նոր սպառման շուկաներ դուրս գալու տակտիկան շատ հաճախ պահանջում է հուսալի գործընկերների հետ համագործակցության հաստատում, որին կարելի է հասնել, մասնավորապես, լիցենզիոն պայմանագրեր կնքելով⁴:

Ի դեպ, լիցենզիոն պայմանագիրը հնարավորություն է տալիս լիցենզատուին միաժամանակ վերահսկել լիցենզառուի գործունեությունը, որը ոչ պակաս հանգամանք է նման պայմանագրեր (այն էլ օտար երկրում) կնքելու շահագրգռվածության հարցում: Լիցենզատուի կողմից լիցենզառուի գործունեության վերահսկման ամենատարածված ձևերից են՝

- արտադրության ծավալի նորմավորումը,
- արտադրանքի նկատմամբ կոնկրետ գնի սահմանումը,
- արտադրանքի սպառման շուկաների սահմանումը և լիցենզիոն առարկայի օգտագործման աշխարհագրական սահմանափակումը,
- օգտագործման ոլորտների սահմանափակում:

Միջազգային բիզնեսի պրակտիկան ճանաչում է երկու խումբ լիցենզիոն պայմանագրեր: Առաջին խումբը կազմում են այսպես կոչված «մաքուր լիցենզիաները», որոնք կապված չեն ապրանքային մատակարարումների, տեխնիկական օգնության կամ այլ արտաքին տնտեսական գործառնությունների հետ, իսկ երկրորդ խումբը կազմում են «զուգընթաց լիցենզիաները», որոնք կազմում են այլ արտաքին տնտեսական պայմանագրերի բաղկացուցիչ մաս: «Զուգընթաց լիցենզիաների» դեպքում առանձին լիցենզիոն պայմանագրեր չեն կնքվում:

Որևէ երկրի օրենսդրությամբ նման տարբերակում չի արվում, քանի որ «մաքուր լիցենզիաներն» ու «զուգընթաց լիցենզիաներն» ունեն նույն իրավական բնույթը⁵:

3. Լիցենզիոն պայմանագրերի հետ սերտորեն առնչվում է մյուս պայմանագիրը՝ ֆրանչիզան: Ֆրանչիզայի պայմանագիրն արտասահմանյան գերականության մեջ դիտվում է որպես ապրանքների բացառիկ վաճառքի պայմանագրի տարատեսակ, որտեղ հանդես են գալիս երկու կողմեր՝ ապրանքներ մատակարարողը և «արտոնյալ» գնորդը (այստեղից էլ «ֆրանչիզա» անվանումը, որը նշանակում է «արտոնություն»)՝⁶:

Այս պայմանագրի պարտադիր տարրերից են այսպես կոչված «բացառիկ պայմանները», երբ վաճառողը գնորդին բացառիկ իրավունք է վերապահում ապրանքը վաճառել կոնկրետ տարածաշրջանում, նշված սպառողին, ընդ որում, ձեռնպահ մնալով սվյալ տարածաշրջանում այլ անձանց միջոցով նշված ապրանքատեսականին իրացնելուց:

Փաստորեն ֆրանչիզայի պայմանագիրը կողմերին հնարավորություն է ընձեռում համատեղ մշակել ապրանքների իրացման միասնական առևտրային մեխանիզմ, որտեղ վաճառողին է վերապահվում գնորդի առևտրային և ֆինանսական գործունեությունը վերահսկելու իրավունքը:

Այստեղ կողմերի միջև ընթանում է ակտիվ փոխհամագործակցություն: Գնորդը ծանոթ է շուկային, պարտավորվում է անցկացնել շուկայագիտական

⁴ Տե՛ս Как защитить интеллектуальную собственность в России, М., 1995, էջ 203:
⁵ Տե՛ս Право и внешняя торговля, М., 1987, էջ 141:
⁶ Տե՛ս Гражданское и торговое право капиталистических государств, М., 1993, էջ 385:

հետազոտություններ և ինֆորմացիան փոխանցել վաճառողին, գովազդել ապրանքը, իրականացնել հետվաճառքային սպասարկում: Իր հերթին վաճառողն էլ պարտավորվում է աշակցել ծառայությունների մատուցման գործում, օգնել գովազդային և ցուցադրական նյութերով ու սարքավորումներով, բարձրացնել գնորդ կազմակերպության անձնակազմի պրոֆեսիոնալ պատրաստվածության աստիճանը և այլն⁷:

Եվ որպեսզի գնորդը կարողանա հաջողությամբ լուծել իր առջև դրված խնդիրները, վաճառողը վերջինիս է տրամադրում նաև լիցենզիա՝ օգտագործելու վաճառողի արդյունաբերական սեփականության օբյեկտները՝ ֆիրմային անվանումը, ապրանքանիշը, սպասարկման նշանը:

Այստեղ է, որ իր բնույթով ֆրանչիզան մոտենում է լիցենզիոն պայմանագրերին, սակայն զլիսավոր տարբերությունը, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, այն է, որ ֆրանչիզան կնքվում է նոր տնտեսական համալիրներ (խանութներ, բեստորաններ, հյուրանոցներ և այլն) ստեղծելու, ինչպես նաև վաճառողի ֆիրմային անվան տակ ապրանքների և ծառայությունների սպառման շուկան ընդլայնելու նպատակով⁸:

Ֆրանչիզայի պայմանագիրը տնտեսական պրակտիկայում լայնորեն ըսկրսեց կիրառվել մեր դարի 70-ական թվականներից: Ռոմանա-գերմանական իրավական համակարգում այն անվանվում է նաև «առևտրային կոնցենսիայի պայմանագիր»: Ծիշտ է, դեռևս ոչ բոլոր երկրներում է ֆրանչիզան ստացել նորմատիվ կարգավորում, սակայն այդ գործընթացը սկսել է ներառել նորանոր երկրներ: Այսպես, 1995 թ. դեկտեմբերի 22-ին ընդունված ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը իրավական կարգավորման է ենթարկել ֆրանչիզան՝ «առևտրային կոնցենսիայի պայմանագիր» անվանումով:

Համաձայն ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1027-րդ հոդվածի՝ առևտրային կոնցենսիայի պայմանագրով մի կողմը (իրավունքներ կրողը) պարտավորվում է մյուս կողմին (ձեռքբերողին) հատուցմամբ ժամանակավորապես վերապահել իր բացառիկ իրավունքների համակցությունը՝ ձեռքբերողի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար, այդ թրվում՝ ֆիրմային անվանման և (կամ) առևտրային տարբերանշանի իրավունքը, ինչպես նաև՝ պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների օբյեկտները՝ ապրանքային նշանը, սպասարկման նշանը և այլն:

Մեր կարծիքով՝ ֆրանչիզայի պայմանագիրն իրավական կարգավորման ենթարկելը նոր մշակվող քաղաքացիական օրենսդրությամբ անհրաժեշտություն է նաև մեր հանրապետությունում, որն էլ ավելի կնպաստեր շուկայական տնտեսության ձևավորմանը և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը:

4. Սեուլի կոնվենցիայում հիշատակված «վարձակալության պայմանագիր» ասելով ամենից առաջ հասկացվում է ֆինանսական վարձակալությունը (լիզինգ): Ծիշտ է, օտարերկրյա ներդրողները կարող են ներգրումներ կատարել սովորական վարձակալության պայմանագրի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279—298 հոդվածներով սահմանված կարգով, սակայն ներդրողական տեսանկյունից առավել շահութաբեր է ֆինանսական վարձակալությունը, որն իրավական կարգավորում ՀՀ-ում դեռևս չունի:

Լիզինգի կիրառումը սկզբնավորվել է մեր դարի 50-ական թվականներից և այժմ ներառում է գրեթե բոլոր երկրները: Լիզինգի վերաբերյալ տար-

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 383:

⁸ Տե՛ս: Комментарий к гражданскому кодексу Российской Федерации, М., 1996, էջ 614:

բեր երկրներում ընդունվել է հատուկ օրենսդրություն (Ֆրանսիա, Անգլիա), կամ նախատեսվել է քաղաքացիական օրենսդրությամբ (Ռուսաստան): Պայմանագրի այս տեսակի լայն տարածումը հանգեցրել է 1988 թ. մայիսի 28-ին Օտտավայում Միջազգային ֆինանսական լիզինգի մասին կոնվենցիայի ընդունմանը, որի նպատակն էր վերացնելու իրավական խոչընդոտները լիզինգի միջազգային կիրառման ընթացքում:

Որո՞նք են լիզինգի առանձնահատկությունները, և ինչո՞ւ այն չի կարող ենթարկվել գործող քաղաքացիական օրենսգրքի՝ գույքային վարձակալության վերաբերող հոդվածների պահանջներին:

Լիզինգի պայմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի մատանշած վաճառողից ի սեփականություն ձեռք բերել նշված գույքը և հատուցմամբ, ժամանակավոր օգտագործման ու տիրապետման հանձնել վարձակալին՝ վերջինիս կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար⁹:

Լիզինգը ներառում է բարդ պայմանագրային հարաբերություններ, քանի որ այստեղ զուգակցվում են երկու պայմանագրեր՝ առուծախի և գույքային վարձակալության, որով էլ պայմանավորված է ոչ թե երկու, այլ երեք կողմերի առկայությունը պայմանագրում: Թերևս այդ խճճվածությունն է հանգեցրել լիզինգի իրավական բնույթի շուրջ կարծիքների հակասականությանը: Ոմանք այն անվանում են գույքային վարձակալություն՝ որոշ առանձնահատկություններով, շատերն էլ դիտում են որպես առուծախի պայմանագիր՝ վճարման հետաձգումով: Սակայն, մեր կարծիքով, ավելի ճիշտ են լիզինգը որպես պայմանագրի առանձին տեսակ դիտողները, որն իր մեջ համադրում է այլ պայմանագրերին հատուկ բնորոշ գծեր:

Լիզինգի պայմանագրով՝

— վարձատուն գույքն ի սեփականություն է ձեռք բերում պարտադիր վարձակալության հանձնելու պայմանով,

— գույքի և վաճառողի ընտրությունը կատարում է վարձակալը, որն էլ կրում է այդ ընտրության ռիսկը,

— գույքը վարձակալության է տրվում այնպիսի ժամկետով, որը սովորաբար համընկնում է գույքի՝ տնտեսական պիտանիության ժամկետին,

— վարձատուն ազատված է մի շարք պարտականություններից, և նրա մասնակցությունն ավելի շուտ կրում է ֆինանսական բնույթ (այստեղից էլ՝ «ֆինանսական վարձակալություն» անվանումը), դրան հակառակ՝ վարձակալը ծանրաբեռնված է լրացուցիչ պարտականություններով¹⁰:

Ահա այն փաստարկները, որոնք լիզինգը լիովին առանձնացնում են սովորական գույքային վարձակալությունից: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ լիզինգը կարիք ունի առանձին իրավական կարգավորման, որը պետք է ապահովվի նոր մշակվող քաղաքացիական օրենսգրքով առանձին հոդվածների նախատեսումով: Եվ դրան հաջորդող քայլը, անկասկած, պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Միջազգային ֆինանսական լիզինգի մասին կոնվենցիային:

5. Անժխտելի է այն փաստը, որ ձեռնարկության հաջողությունը պայմանավորված է ոչ միայն բավարար ֆինանսական միջոցների առկայությունից, այլև այդ ձեռնարկության գործունեությունը հմուտ կազմակերպելուց: Առանց ձեռնարկության ղեկավար անձնակազմի պրոֆեսիոնալիզմի, կառա-

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս Гражданское и торговое право капиталистических государств, էջ 343—345:

վարման ու կազմակերպման փորձի, դժվար թե որևէ ձեռնարկություն կարողանա լուծել իր առջև դրված խնդիրները:

Սվ այսօր, շուկայական տնտեսությանն անցման նոր պայմաններում, առավել քան երբևէ, մեր հանրապետությունը կարիք ունի տնտեսական կազմակերպման ու կառավարման՝ օտարերկրյա առաջավոր փորձին: Այդ փորձը մեզ կարող է փոխանցվել, մասնավորապես, կառավարման պայմանագրի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված է կառավարման պայմանագրերի կնքման հնարավորությունը (ի դեպ, մեր օրենսդրությամբ այն կոչվում է «լիազորագրային կառավարման պայմանագիր»): Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկության հիմնադիրը համապատասխան գույքն իրավունք ունի տրամադրել իր կողմից ընտրված լիազորագրային սեփականատիրոջը (դա այն անձն է, որն իրականացնում է լիազորագրային կառավարում)՝ սահմանելով այդ գույքի կառավարման կարգն ու պայմանները: Հիմնադրի և լիազորագրային սեփականատիրոջ հարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթուղթը կնքված լիազորագրային կառավարման պայմանագիրն է, որում պետք է արտացոլվեն՝ լիազորագրային կառավարման հանձնվող գույքի կազմը, դրա կառավարման պայմանները և սահմանափակումները, լիազորագրային սեփականատիրոջ պարտականությունները և պատասխանատվությունը, ծախսերի փոխհատուցման և պարգևատրման կարգը, լիազորագրային կառավարման արդյունքներից օգտրվողի իրավունքները, լիազորագրային կառավարման պայմանագրի գործունեության ժամկետները և դադարեցման կարգը, լիազորագրային կառավարման պայմանագրի իրականացման համար անհրաժեշտ այլ պայմաններ:

Այստեղ առկա են մի շարք հանգամանքներ, որոնք կողմերին հավասարապես շահագրգռում են նման պայմանագրի կնքման հարցում:

Այսպես, հիմնադիրը շահագրգռված է, քանի որ այս դեպքում սեփականության իրավունքի փոխանցում տեղի չի ունենում, լիազորագրային սեփականատերը, որպես կանոն, ստանում է վարձատրություն և ոչ թե շահույթի մաս, և որ ամենակարևորն է՝ պատրաստվում և կատարելագործվում են տեղական կադրեր,՝ մենեջերներ, որոնք հետագայում իրենք կարող են ստանձնել համապատասխան ձեռնարկության կառավարումը: Իսկ օտարերկրյա լիազորագրային սեփականատերն էլ շահագրգռված է, քանի որ այստեղ անհամեմատ փոքր է նյութական և ֆինանսական միջոցներ կորցնելու ռիսկը, ստանում է շահույթ՝ վարձատրության տեսքով, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնվում անմիջականորեն ուսումնասիրել տվյալ շուկան՝ հետագայում ավելի խոշոր նախագիծ-առաջարկներով հանդես գալու համար¹¹:

Լիազորագրային կառավարման պայմանագիրը շատ հարցերում հիշեցնում է կոմիսիայի և հանձնարարության պայմանագրերը: Իհարկե, մենք չենք կարող ժխտել այդ նմանությունը, սակայն, ի տարբերություն վերջինների, լիազորագրային կառավարման պայմանագիրը կրում է տեղական բնույթ, այսինքն կնքվում է որոշակի ժամկետով (սովորաբար 3—5 տ. ժամանակով), բազմաթիվ և բազմաբնույթ փաստական և իրավաբանական գործողություններ կատարելու համար¹² (իսկ հանձնարարության պայմանագրով նախատեսված է որոշակի իրավաբանական գործողությունների կատարում,

¹¹ Տե՛ս Комментарий к гражданскому кодексу Российской Федерации, էջ 594:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 597:

կամ կոմիսիայի պայմանագրով՝ մեկ կամ մի քանի գործարքների կնքում)¹³,

Մեր կարծիքով լիովին ընդունելի է այն, որ օրենսդիրը կողմերին հնարավորություն է ընձեռել ինքնուրույն սահմանելու լիազորագրային կառավարման պայմանագրի պայմանները, որն անկասկած բխում է պայմանագրային ազատության սկզբունքից: Սակայն դա չի նշանակում, որ կողմերը բացարձակ ազատ են իրենց գործողություններում: Որպես կանոն, օրենսդրության մեջ նշվում են ընդհանուր շրջանակներ, որոնց սահմաններում նոր միայն կողմերին տրվում է ազատություն: Այս առումով անհրաժեշտ է նոր մշակվող քաղաքացիական օրենսգրքով նախատեսել «գույքի լիազորագրային կառավարման պայմանագիրը», օրենսդրորեն սահմանել պայմանագրին վերաբերող ընդհանուր դրույթներ, որը բավականին որոշակիություն կմտցնի կողմերի միջև փոխհարաբերություններում:

6. Կոնվենցիայում նշված վերջին պայմանագիրը արտադրանքի բաժանման պայմանագիրն է: Իրավաբանական գրականության մեջ այն հիշատակվում է 50-ական թվականներից և կապված է Ինդոնեզիայում 1956 թ. կնքված նավթային հանքերի հետախուզման և արդյունահանման համաձայնագրի հետ¹⁴:

Որպես կանոն, արտադրանքի բաժանման պայմանագրերը կնքվում են բնական ռեսուրսների հետախուզման, արդյունահանման և շահագործման բնագավառում, և մեծապես հիշեցնում են կոնցեսիոն պայմանագրեր՝ տարբերության մեջ սակայն, որ այս դեպքում օտարերկրյա ներդրողը պարտավորվում է արդյունահանված ռեսուրսների և դրանցից թողարկված արտադրանքի մի մասը զիջել ընդունող պետությանը (այստեղից էլ՝ «արտադրանքի բաժանման պայմանագիր» անվանումը)¹⁵:

Նման պայմանագրի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ աղոտ կերպով հիշատակում է ընդերքի մասին ՀՀ օրենսգրքը: Ըստ ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդվածի՝ պայմանագիր կնքելու համար օտարերկրյա ներդրողը նախևառաջ պետք է ստանա ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում հատկապես լիազորված պետական մարմինների թույլտվությունը (արտոնագիր), որի հիման վրա էլ կնքվում է պայմանագիրը:

Նույն օրենսգրքի 13-րդ հոդվածով՝ «պայմանագիրը ընդերքից օգտվելու ընթացքում կողմերի հարաբերությունները որոշող հիմնական իրավական փաստաթուղթն է, որը, մասնավորապես, պետք է պարունակի՝

— վարձի չափը և դրա մուծման կարգը,

— կողմերի փոխհարաբերությունները որոշող այլ պայմաններ»:

Ինչպես նկատում ենք, վերոհիշյալ կետերը ոչ թե ուղղակիորեն են ներշնչում, այլ հիմք են տալիս ենթադրել, որ արտադրանքի բաժանման պայմանագիր կնքելու հավանականությունը մեր օրենսդրության մեջ բացառված չէ: Բայց միայն այդ ենթադրությունը բավարար փաստարկ չէ նման պայմանագրով օտարերկրյա ներդրումներ ակնկալելու համար. այլապես իրավական անորոշության պայմաններում օտարերկրյա ներդրողները կշրջանցեն արտադրանքի բաժանման պայմանագիրը, և այն կհայտնվի կիրառելիության շրջանակից դուրս:

Տարբեր երկրներում արտադրանքի բաժանման պայմանագրի իրավական

¹³ Տե՛ս Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգրքը, Երևան, 1984, էջ 399, 407:

¹⁴ Տե՛ս Правовое регулирование иностранных инвестиций в России, էջ 77:

¹⁵ Տե՛ս Иностранные инвестиции в России, էջ 35:

կարգավորման հարցում գործում են տարբեր եղանակներ: Օրինակ, Անգլիայում նման պայմանագրային հարաբերությունները կարգավորվում են հատուկ օրենսդրությամբ, կամ էլ թե չէ օրենսդիր մարմնի կողմից հաստատվում են տիպային պայմանագրեր, որոնք ճանաչվում են օրենսդրության բաղկացուցիչ մաս: Ավելի ճկուն տարբերակ է գործում Նորվեգիայում, երբ պառլամենտը հաստատում է կնքված պայմանագիրը՝ նրան շնորհելով օրենսդրական ակտի կարգավիճակ:

Ինչպես նկատում ենք, իրավական կարգավորման տարբերակները բազմաթիվ են, և մեզ մնում է կատարել առավել նպատակահարմար ընտրություն, որպեսզի այս բնագավառում ևս ապահովվի պատշաճ իրավական կարգավորում:

7. Սրանցով, բնականաբար, չեն սպառվում այն պայմանագրերը, որոնց հիման վրա, առանց նոր իրավասուբյեկտ անձի հիմնադրման, կարող են իրականացվել օտարերկրյա ներդրումներ: Տնտեսական գործունեության պրակտիկայում կարող են ձևավորվել տնտեսական պայմանագրերի նոր ձևեր, և որպեսզի նրանցով ևս չբացառվի ներդրումներ կատարելու հնարավորությունը, առաջարկում ենք օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքը լրացնել նոր հոդվածով, որը կարելի է մոտավորապես սահմանել հետևյալ կերպ. «Օտարերկրյա ներդրողների և ներդրողական գործունեության մասնակիցների իրավական վիճակը սահմանող հիմնական փաստաթուղթը պայմանագիրն է:

Գործընկերների ընտրությունը, պայմանագրերի կնքումը, տնտեսական հարաբերությունների՝ ՀՀ օրենսդրությամբ չհակասող այլ պայմանների սահմանումը բացառապես օտարերկրյա ներդրողների և ներդրողական գործունեության մասնակիցների իրավասությունն է»¹⁶:

А. М. АЙКЯНЦ — Договорная форма привлечения иностранных инвестиций и законодательство РА. — Привлечение иностранных инвестиций имеет решающее значение для становления рыночных отношений и экономического подъема РА. Оно осуществляется в разных формах, среди которых особое место занимает договорная форма привлечения иностранных инвестиций. В статье подробно анализируются понятия договорное управление, лицензирование, лизинг, франшизы и разделение продукции, которые приняты в практике международного бизнеса, но пока либо не урегулированы, либо недостаточно урегулированы законодательством РА.

Автор указывает хозяйственно-экономическое значение их применения и предлагает подвергнуть эти договоры более детализированному правовому регулированию.

¹⁶ Տե՛ս **Законодательство об иностранных инвестициях России и стран ближнего зарубежья**, М., 1993, էջ 96: